

Քաց նամակ Աշտարակ համայնքի համայնքապետ
Թովմաս Շահվերդյանին
04.11.2024.

Մեծն Ներսեսի օրհնանքով բարի,
Անթիվ ծրագրեր ես իրականացնում,
Անունդ արևի շողով կգրվի
Քաղաքիս լուսե Դարամատյանում ...

Այս տարիների անցած քո ուղին,
Վստահության մեծ լույս է ճառագում.
ԴՐԱԽՏ ԱՇՏԱՐԱԿ, ԿԱՆԱԶ ԾԱՌՈՒՂԻ,
Մայթեզրեր, բազում ծաղիկներով լի:

Աստղված ինքն է օրհնում քո ճամփան,
Որ ծրագրերդ իրականացնես,
Անելիքդ շատ, սերդ անսահման
Աստժո օրհնությամբ, ամեն ինչ կանես:

Նախկինում չկար մի ղեկավար մարդ,
Որ Հին Աշտարակից հուշեր թարմացներ.
Դու եղիր նվիրյալ ղեկավարը այդ.
Ու Աշտարակի ոգուն հարազատ.

Փորձիր մի թանկ հուշ վերադարձնել...
Տարեցներին քեզ մոտ, հրավերք արա,
Հարցրու քաղաքիս անցյալի մասին,
Ո՞ր մասն էր սիրուն, ո՞րը ավարա,

Ի՞նչ կուզեն այսօր, ետ դարձնել կրկին:

Ճարտարապետ էլ հաստատ կգտնես.
Ով լավ հիշում է Աշտարակն իմ Հին.
Եվ նա քեզ կասի, ինչը թարմացնես,
Որտեղ է անմահ անցյալի ոգին :

Համոզված եմ, որ զտարյուն Հայ ես,
Ու նախնիներիդ պես պատվախնդիր,
Սկսած գործերդ նամուսով կանես,
Քեզ չի վախեցնի, ոչ մի բարդ խնդիր...

Թող հին ու նոր այդ համաձուլվածքով
Քաղաքս ծաղկի ու գեղեցկանա
Իր վսեմ, փարթամ, նորովի տեսքով
Պատմական շքեղ Հուշարձան դառնա:

Դու դա կարող ես, համոզված եմ ես.
Սատարում է քեզ դյուցազնաց ոգին
Շատ բարդություններ հաղթահարել ես
Տիրանալով մեր անսպառ հավատին:

Պատրաստակամ ու հրաշք թիմ ունես,
Այս դժվար գործում, քեզ հետ միակամ,
Դարձրեք քաղաքն իմ, Եղեմի պարտեզ.
Հավատում եմ քեզ, Թովմաս Շահվերդյան:

Հարգանքներով՝ Անահիտ Դանիելյան